

Ղազարամբղ համարատու Չար-
հնային վե ճամառ իրքերի կիս-
երի քաղ օրուհուր Գ.Ր.
Սեմեյիկի պոլիս իջին Բեշին 60
Սլըբ ալըբը 35
Սեմեյիկի Բեշին քաղա իջին 85
Սլըբ ալըբը 45
Բոսթա իւնիքի պլիգե ալիս տիբ-
90 դրոշուդ քոսթա բույս 80
դրոշու գապուլ օրուհուր
15 կիսիկս ցիսիս 60 քր. տըր.

ՄԵԶՄՈՒՐԱԿ

30 րարս

ԱԵՊԱԿ

30 րարս

مجموعة اخبار

بك اوغلى تقيم جادى نومرو 70

DIRECTION
DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand Rue de Pér. 65

Ղազարամբղ միւթեղիկ խառնուրդ իջին Յ. ԹՕՂԱՅԵԱՆ միւթեղիկ օրուհուր Խոսարիկս Գեյօղուհու ճամառի քչկիտէ Ն. 65

ԱՍԻԹԱՆԷ 1 ՕԴՈՍՏՈՍ

ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍԵԱՆՔ ՆԻ ՄԵՐ
ՎԵՐՋԻՆ ԽՈՐՀՐԵՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հակառակ այն բազմաթիւ և բազմա-
մարտի փաստերուն զորս յառաջ բե-
րինք ի ջատագովութիւն Յիսուսեանց,
զայն կատարելապէս ճանչցուցած
ըլլալու յաւակնութիւնն չունինք բը-
նաւ Մի քանի յօգուածներու ան-
ձուկ սահմանն անբաւական է առ-
այս Պատմութեան պէտք է դիմել
ամենայն ինչ տեսնելու համար իւր
լուսարձակ մանրամասնութեան մէջ,
Բազմաթիւ մեծանուն Յիսուսեանց
կեանքն գրուած և հրատարակուած
է արգէն Բաց ի անոնցմէ որք Ս-
կեղեցւոյ կողմանէ սուրբ ընդուն-
ուած են հանդիսաւորապէս, կան
չատ ուրիշներ որք «սրբութեան ա-
նուահոտութեամբ» ապրած ու մն-
ւած են, և որոց վարքն ոչ նուազ
բեղմնաւոր հանրագումար տեսնուի՝ ար-
ժանի համարուած է առանձինն հը-
րատարակուելու և օրինակ ընծայ-
ուելու առաքինասէր քրիստոնէսայ-
ներու:

Հաղարաւորներու մէջէ մին միայն
յիշելու համար, ո՞վ չկրնար գտնել
և կարդալ Ս. Փրանկիսկոս Պօրճեա-
նի կեանքն(*) և Եւ բաւ է որ մարդ
անկեղծութեան ամենազոյն զգա-
ցում մ'ունենայ, և ճշմարիտ մեծու-
թեան ամենափոքր սէր մը, ի՞նչպէս
հար է չլուզուիլ, չ'սքանչանալ ի
անս այնքան բարոյական բարձրու-
թեան, գիւցազնութեան, ի տես սի-
րոյ և բարեգործութեան այնքան
հրաշալի օրինակներուն: Սպանիոյ
իլիսան մ'է, դուքս Կանտալիի և
փոխ-արքայ Գազալոնիայի՝ որ կը
թողու իւր թագն և իւր սուր, իւր
հոյակապ պալատներն, իւր ոսկե-
փայլ ճոխութիւններն և իւր վայելքն
բիրապան հեշտացուցիչ, և կ'երթայ
անշուք իցկի մը մէջ, կրօնաւորի սեւ
պարեգօտին տակ անցընել ամենէն
աւելի անփառունակ, ամենէն աւելի
ունայնացեալ, մահացուցեալ կեանքն
որ երբեք երեւցած լինի մարդկան
Աւետարանի քարոզութիւնէն ի վեր:
Նա որ՝ արքայազարմ և իշխան՝ հը-
րամայել միայն ուսած էր, հնազան-
դողներու ամենէն խոնարհն և ամե-
նէն եռանդուն կը լինի: Նա զոր
կը պաշտէին դասակը սպասարկուաց,
կը լինի աղքատներու, հիւանդնե-

րու, թշուառ և յետին տառապելոց
ամենէն անձնուէր և ամենէն դորո-
վալիւր ծառայն: Եւ երբ Հռովմէա-
կան ծիրանւոյն աւելի փառք տալու
քան անտի փառք ստանալու համար
Ս. Քահանայապետից հաճութիւնն
կը փորձէ բազմիցս կարգինալու-
թեան բարձրացնել զայն, եօթն ան-
գամ կը փախչի նա Հռովմէն այդ
պատիւներն չընդունելու և իւր Միա-
բանութիւնն չենթարկելու համար
նմանօրինակ բացառութեանց: Ահա
կատարելութեան կեանքի մը սքան-
չելապէս գեղեցիկ դասերն, որք շատ
առատ չեն այս ախուր աշխարհի
վրայ:

Իսկ անոնք որ բարեհաճին կար-
դալ Դուէրիո-ժողի պատմութիւնն(*)
որ ընդհանուր Յիսուսեանց վարքն,
ոչ ինչ, գործերն, յաղթանակներն ու
փառքերն կը ներկայացնէ իրեն և ի
հայելոյ, պիտի համոզուին մի ան-
գամ ընդ միշտ թէ աղքատաց ժո-
ղովորդներ, Աւետարանի թշնամի-
ներ միայն կրնան ասել զանոնք և
թէ երբ հարկ լինի թուել մարդ-
կութեան քաղաքակրթիչներն, անա-
պարծ մեծութիւններն, աղմկալից
համբաններն, առօրեայ փառքերն,
չահախնդրի ծառայութիւններն, ցնո-
րամիտ երազողներն, չաղակրատ գը-
րողներն վե՛ր, չա՛տ վեր պէտք է
դնել այդ բազմեղանի անշուքա-
կան անձնաւորութիւններն:

Ինչ որ յանձնու ողբալի է և ինչ
որ բաւական չէ դիտուած, այն է
թէ ամեն նախատինք Յիսուսեանց
դէմ՝ նախատինք մ'է բարոյականի
ու Աստուծոյ դէմ: Այդ ուղղելով
մեր խօսքերն Պ. Նաթանեանի և իւր
նմանաց կ'ըսենք. երբ կ'ընդունիք
որ յանցանք մ'է զրպարտել ամենէն
հասարակ մարդկային անհատ մը,
ի՞նչպէս կրնաք հանգարտ խրդի-
զրպարտել բարեբար և մեծագործ
Միաբանութիւն մ'ամբողջ. երբ կը
հաւատաք թէ վատութիւն մ'է զըր-
պարտել նոյն իսկ ամենէն անարդ-
ձորագործներն, ի՞նչպէս կըր-
նաք հանգիստ ննջել սուրբերու զըր-
պարտիչ լինելն վերջը: Իսկ մարդ-
կային արժանապատուութեան տե-
սակէտով աններելի է ձեր այս ըն-
թացք, և սակայն պէտք է մտածել
թէ քրիստոնէսայ կը կոչուիք դուք...
Ու երբ ձեզ կ'ըսուի թէ չէք վերա-
բերել Գրիստոսի Եկեղեցւոյն, թէ
դադարած էք Աւետարանի աշակերտ

լինելէ, թէ անարժան դործած էք
դձեղ արդարոց երանութեան, կը
զայրանաք, կը բորբոքիք, բառիկը-
ներու մէջ բաւական լուսանք չէք
դտներ մեր ճակտին նետելու, և ձեր
լրագիրներուն սինակները, ձեր գը-
րոց էջերը կը լեցնէք «աններողու-
թիւն, մոլորեանդութիւն» գոչելով...
Դուք և ձեր նմանիք չե՞ն որ ամեն
օր գովեստներ կը շռայլեն, դափ-
նիներ կը ձօնեն Աւետարանի ամե-
նէն վայրագ թշնամաց, կրօնի ա-
մենէն դիւալունչ հակառակորդաց:
Քանի՜ քանի՜ անգամներ անհամա-
ցան ունեցած ենք տեսնելու որ ա-
մենէն սրբազան բառերն պղծուած
են ի ջատագովութիւն Առուեսներու,
Տիտորներու, Սէն Սիմոններու, և այլ
աստուածամարտ հրէշներու... Եւ
Քրիստոսի ամենէն մեծ բարեկամաց
դէմ առաջին անգամ չէ որ պղծալի
թշնամանքներ կը տեղան: Չշատա-
նալով տալէ աշխարհի ամենէն նուր-
բական բառին ամենէն ատելի և նեն-
գաւոր իմաստ մը, չշատանալով ձեր
խօսակցութեանց մէջ յեղի զեղեղայն
անդուլ կը փութաք գրական հրա-
պարակ ալ ի՞նչեւ ու ամենուն առջեւ
և ամենուն ի լուր անգոսնել անար-
դել աշխարհի ամենէն բարձր անձ-
նաւորութիւններն, Հաւատոյ ամենէն
անձնուէր պաշտօնեայններն, Աւետա-
րանի ամենէն սրբաշունչ առաքելա-
ներն, Եւ յետոյ դեռ համարձակու-
թիւն ունենալ, դեռ երե՛ս ունե-
նալ ինքզինքն քրիստոնէսայ հուշա-
կելու, ի՞նչ անգութ ու սրբապիղծ
հեղինակութիւն... Բայց մինչեւ ե՞րբ
այս կուրծքիւն, մինչեւ ե՞րբ այս-
քան արհամարհանք երկնից դէմ:
Ձեր բովանդակ կենաց մէջ գէթ
հինգ վայրկեան, գէթ անգամ մը
մը միայն մտածեցէ՛ք թէ «իմպիե-
կատելի ե՛ս առանց քրիստոնէսայ յիմե-
նի վաճառել թշնամիներ և առանց նո-
րա ամենէն սիրելի յարեկամներն»:

Չգիտեմ թէ մեր այս յօդուհ-
ներուն առջեւ ի՞նչ պիտի լինի Պ.
Նաթանեանի ընթացքն: Սակայն կան-
խառ կրնանք երեք հնթադրութիւն-
ներ ընել: Ա. բնաւ չպատասխանել,
Բ. պատասխանել առանց փաստերու,
առանց պատմութեան, Գ. ճանշալ
խոնարհաբար իւր սխալներն և յետս
կոչել իւր անխառ դատաստաններն:
Առաջին ենթադրութեան մէջ յոյժ
անպատուաբեր փախուստ մը պիտի
լինի իւր լռութիւն, Արդարեւ եթէ
կայ երբեք պարտաւորութիւն մը
խօսելու հրապարակի վրայ, այն պա-
րագայն է անշուշտ յորում քննադատ

ոք պատմութիւն ի ձեռին և վկա-
յութեանց դեղերու տակ կը ջախ-
ջախէ հակառակորդին վճիռներն, և
զայն կը ներկայացնէ իրեն դժ-
բախտ զրպարտիչ մը որ յանուն «Պատ-
մական նիւթեր» ու պատմութեան
դէմ կը դաւաճանէ և խիղճերը կը
մոլորեցնէ: Երկրորդ ենթադրու-
թեան մէջ տգէտներն ու իմաստակ-
ներն պիտի կրնան շլանալ իւր ու-
նայն ու անամէջ նախադատութիւն-
ներէն, չարամիտ տխմարներն պիտի
կրնան ծափահարել ի լուր իւր անձ-
նական յարձակմանց՝ և պարսաւա-
նաց. բայց լուրջ և աշխուհոհ ան-
ձինք պիտի կարեկցին իրեն, և բազ-
դատելով իւր նախատինքներու ճո-
խութիւնն իմ փաստերու և վկա-
յութեանց ճոխութեան, պիտի ըսեն
յայտնի կամ լուրջայն, փառս պիտի
են, փառս՝ ճոռումբաւորութիւնն պատ-
մութիւն չէ, և ոչ նախատինքներն՝
պատմաւորաւորութիւն:

Իսկ երրորդ ենթադրութեան մէջ
Պ. Նաթանեան ի յայտ պիտի դա-
հակառակ իւր առաջին վրիպանաց
որք յայնժամ պիտի կարենան ակա-
մայ համարուել - ի յայտ պիտի դա-
յի իրեն յարգող ճշմարտութեան և իը-
րեւ սիրող սրբաւորութեան: Անկեղծ
ու քաջասիրտ խոստովանութիւն մը
իւր մոլորութեանց, ի՞նչ թանկագին
ու գեղեցիկ դաս այնպիսի տխուր
միջավայրի մը մէջ, ուր այնքան բա-
զումք են որ կը մոլորին և կը մո-
լորեցնեն, և ոչ ոք է, ափսո՛ս, որ
արիութիւնն ունենայ ճանշալու իւր
թերութիւններն ու վրիպանքներն:
Այսպիսի յետս կոչում մը, հաւատա-
ցե՛ք, Պ. Նաթանեան, առաւել պատ-
ուաբեր պիտի լինի ձեզ քան զոր
չէք կարծեր: Ի՞նչ փոյթ թէ անաղ-
նիւք և անբարեկեց ռմտնք ակաւյ
կրճտեն ձեզ դէմ: ամեն վեհանձն
և ճշմարտասէր հոգիներ պիտի խըն-
դակցին ձեզ և պիտի շնորհաւորեն
զձեզ մի այսպիսի բարոյական բար-
ձրութեան համար, որոյ գեղեցիկ
օրինակն պիտի հանդիսանաք ձեր
բոլոր եղբայրակցաց մէջ: Ճըշ-
մարտութեան բարեկամք այսպէս ը-
րած են միշտ, և մարդկութեան ա-
մենէն պատուաբեր անգամք ծափա-
հարած են զայն և օրհնած՝ անոնց
յիշատակն:

Թիւեցէ՛ք թէ ճշմարտութիւնն ա-
րեւ մ'է որ կրնայ խաւարել մի պահ,
բայց չկարէ չիջանիլ ի սպառ: Մի՛
մոռնաք բնաւ թէ ապագայն յաճախ
ուսելի արդար քան զանցեալն՝ անի-
ծիւք միայն կը յիշէ անոնց անունն
որք ինքն չեն ըրած ժողովրդոց

(*) Vie de S. François de Borgia,
par J. M. Daurignac.

(*) Histoire de la Compagnie de
Jésus, par Crétino-Joly.

